

ՏԱՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՕԴՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

ՐԱՐԴԵՂԵՆԻ ԻՇ Բամղակ ԳՐԱՆՏԻԼ
ՃԱՆՇԱԾՄ ՀԱՅՐԴ :

ՐԱՐԴԵՂԵՆՍԵՐՈՒ ՄԵջ շատ ան-
գամ բամպակի թել կը գտնուի, ո-
րով դիմացկուն չեն ըլլար ու շուտ մը
կը մաշին : Ի՞ս բանս Ճանչնալու հա-
մար, բրդեղենին մէկ ծայրը բզըկտե-
լէն վերջը՝ թելերը Ճրագի բոցին
բռնէ, կը տեսնես որ բամպակէ թե-
լերը մէկէն կ'այրին կը փանանան, իսկ
բրդին թելերը այրելով՝ ածուխի պէս
գնտակ մը կը դառնան, որ եթէ բո-
ցէն մէկդի առնես՝ մէկէն գէշ հոտ
մը կը ձգէ, որ է բրդին հոտը :

ԴԻՖԵՂԱՀԱՆ ԲԺԼԱՆԻՒՆ ՋՐԱՎԱԽՈՒՅԵՆ ախ-
տին, որ առաճիւրէն գուտուզ կ'ըսուի :

Ի՞ս վնասակար ախտին սկիզբը կատ-
ղած չներուն խածնելէն է, և անկից
նաև ախտակրեալ մարդոյն բերնի շո-
ղիքին՝ քովը գտնուած ուրիշ մարդու
մը մարմնոյն վրայ կը պչելէն անոր ալ
կ'անցնի :

Ի՞ստակրին առջի նշանը ան է՝ որ
տրտում կ'ըլլայ, և ուտելու խմելու
ախորժ չունենար, և հասարակօրէն
իր ատենէ դուրս մեռնիլը ու քժը-
կուելու հիւանդ ըլլալը կ'իմանայ :
Հետոյ մէջքի ցաւ մը կը սկսի, և վեր-
ջի նշանը՝ ջուր կամ հայլ ձեռքը տը-
րուինէ՝ կը նետէ ու կը սրդողի . և
աս նշանէն ետքը շատ չանցնիր, սոս-
կալի ուժով մը կը կատղի ու չուան-
ներով կապելու կ'ըլլայ . վերջապէս՝
անտանելի տանջանքներով չարաչար
կը մեռնի :

Հիրաւի անհաւատալի կ'երևնայ
որ աս զարհուրելի ախտը չնչին դե-

ղով մը բժըկուի . բայց առանց պար-
սաւելու ան հնուց մնացած բժըկու-
թիւնները, որ ուամկաց և գիւղակա-
նաց քով երբեմն պահուած կը գըտ-
նուին, գիտնալու է որ ախտակրին
լեզուին տակը գնտասեղի գլխուն չափ
ձերմակ բիծեր կը սկսին երենալու,
որ երթալով կը մեծնան, մինչեւ սիսուան
չափ կ'ըլլան, ու ետքը ինքիրերնուն
կը ծակին ու մէջի հիւթը կը պար-
պուի, ու անյայտ կ'ըլլան : Ի՞ս բիծե-
րը դեռ չմեծցած՝ պղտիկ մկրատով
մը կտրելու ու մէջի թանձր հիւթը
դուրս առնելու է, ետքը ատեն չան-
ցընելով՝ սիսուրի ջրովքանի մը հեղ
լուանալու ու լորձունքը դուրս տա-
լու է : Ի՞նկէ ետքը ուրիշ դեղ պէտք
չէ, հապա երկու օր իբրև հիւանդ՝
մսեղէն, պտղեղէն և այլ ծանր կե-
րակուրներէ ետ կենալու է ախտա-
կրիր . այս զարմանալի դեղովու դար-
մանով բոլորովին կ'առողջանայ հի-
ւանդը ան սոսկալի ախտէն :

(Ը) պէտք բժիշկները ուրիշ կերպ
դեղերով ջարը գտած են աս ախտին,
բայց չեն քաղաքներէն աւելի՝ աղքատ
դեղերու մէջ պատահելով աս ախտը,
անոր աս ազգու դեղն ալ գիւղակա-
նաց քով պահուեր մնացեր է . և տած-
կի դեղացիները աս դեղը ընողին դայ-
պուրին՝ անունը կուտան : (Ը) մարդ
եղեր է և թէ անասուն՝ աս դեղովս
կը բժշկուին : Իշրոպայի Ճեմարան-
ներն ալ լսած են աս բժշկականու-
թիւնը :

Որոնք որ շուն պահելու հարկաւո-
րութիւն ունին՝ անոր խմելու ջուրը
միշտ հոգալու են . թէ որ չէ՝ ծարաւ
մնալով երբոր հիւընդնայ շունը, տի-
րասէր բնութիւնը կը փոխուի վայ-
րենի ու վատթար բնութեան :

Ի՞ս օգտակար դեղն ու խրատը բա-
րեսէր պատուաւոր ու հաւատարիմ
անձ մը հաղորդեց մեղի, որ աջքովը
տեսեր է աս ախտին աս դեղովս բժշ-
կուիլը :